

ԱՌՈՒԱԿԸ

(Իմ անունի գրոյցներէից)

Հեռու արեւելքում, կարծեմ Հնդկաստանում, (գրոյցն այդ մասին որոշ ոչինչ չէ ասում) կար մի հզօր, հարուստ թագաւոր: պրում էր նա ինչպէս ամէն արեւելեան իշխան՝ ճոխ ու լիառաւոր եւ թողնում որ շուրջը թշուառութիւնը հպատակներին մաշէր, միայն թէ իրեն պալատ ու կանայք չը պակսէր, հետեւորդն ու իշխանը ապրէր առատութեան մէջ, կեանք վարէր շտալ, մի՛շտ հաճոյալից:

Ունէր նա պալատներ՝ միմիանցից ընդարձակ. չքեղ պարտէզներ՝ միմեանցից գեղածիծաղ, սակայն եւ միշտ շինում էր, տնկում էր նորը եւ նրանց համար՝ իր հպատակներին ո՛չ քրտինքն էր խնայում, ո՛չ էլ ջանքն եւ ոյժը:

սում են որ արքան սիրում էր անընդհատ շինել եւ շինել մի՛միայն պալատներ՝ իր բնակութեան, պարտէզներ՝ իր վայելչութեան համար:

Ու շինում էր իօնչը կարող էր նրան արգելք լինել, Հո՞ղ էր պալատ: Եւ մի՞թէ իր տէրութեան հողի կէսը իրենը չէր — իր որսի, պալատների, կանանց ու պալատականների համար, բնակարանի եւ պարտէզների՝ ընդ միշտ յատկացրած:

Շինող ձեռքեր էին պակաս: Բայց մի՞թէ իր հպատակների ոյժն ու քրտինքը նա չէր գործածել, Եւ եթէ ուզենար, չէ՞ր կարող նոյն իսկ նրանց դիտկներիցը պատեր կանգնել, կամ նրանց արիւնը՝ շաղախի գործադրել:

Կանէր: Իւրեւեան այդ արքան ինչե՞ք ընդունակ չէր անելու:

Եւ անհա նա մտածեց մի օր, այնպիսի՛ մեծ ու չքեղ մի պարտէղ շինել, որի մի ծայրից միւսը գնալու՝ օրեր տեւէր, եւ մէջը՝ բոյս, ծառ, պտուղ կամ բանջար, թողուն ու գաղան լինէր, պահպանւէր եւ իր հաճոյքի համար՝ ձեռքի օակ գտնւէր:

Մտածեց ու արաւ: — Մտրակի առաջ քշել տաւ հպատակներին՝ գէպի ընտրած հողը, տնկեց, հեռու տեղերից հրամայեց բերել ծառ, բոյս, կենդանի, կազմեց բաժանմունքներ, կանգնեց մեծ շէնքիւ եւ աղպէս, տարիներով, երկրի ամբողջ ոյժը ծառայեցրեց իր հաճոյքին:

Ու պարտէզը շինուեց մեծ շքեղութեամբ, ահաւոր մեծութեամբ : Իր հրամանով պեղւած ու բերւած ջրեր սռողում էին նրան, ջրվէժներ՝ զովացնում օդը, բազմաթիւ շատուաններ, անուշ խոխովունով, մեծ-մեծ լճակներ՝ սիրուն փափլումով՝ հիացնում էին տեսողի, եւ, արքան, հպարտ՝ շրջում էր դրանց մէջ, հրճւում ամէնով :

—

. . . Եւ եղաւ մի օր էլ, որ շատ հեռաւոր, անյայտ լեռներէ, ձկաւ մի առուակ, ո՞վ գիտէ — Ինչպէս, որտեղից՝ ներս սպըր-դեց, գտաւ հզօր արքայի հողերը ու մտաւ նրա կառուցած մեծ պարտէզը : Իմաց տւին արքային՝ նոր հիւրի գալստեան մասին :

Թագաւորը ծիծաղեց :

— Ի՞նչ կայ, ասաց նա — բարի լինի դալուսար : Թող դայ ջրեւ լու իմ պարտէզը :

Ու տեղ աւին առուակին . յարդարեցին ճանապարհը, թողին որ հոսէր, ծորար պարտիզի մէջ, մտնէր-ոտոգէր ծառերը, շշնջար բոյսերի հետ, գգւէր ծաղիկները :

Բայց տե՛ս թէ ի՞նչ եղաւ յետոյ — Բանն այն՝ է, որ անկոչ հիւրը սկսում էր մեծանալ, աննշմարելի նախ՝ առատանալ, առուակը գետակի փոխւել, եւ, ապշած արքան ու պալատականները մի օր էլ տեսան, որ աննշան, հեռու տեղերից եկող հիւրը՝ սկսել էր ինքը միայն ողողել ամբողջ պարտէզը, ծածկել ջրվէժ, շատուան, յետոյ մինչեւ իսկ դուրս սողալ պարտիզից եւ գնալ հպատակների արտերին ու գաշտերին ջուր տալ :

— Վա՛յ . . . գոչեց Թագաւորը — Հիւրին երես տւինք . այժմ նա մեծանում է եւ սահմանն անցնում :

Եւ իրաւ, նոր հիւրը խոշորանում էր միշտ, վազքն էլ արագացնում, շշուկը մեծացնում, հոսում էր արագընթաց պարտիզի միջով, յետոյ, կամաց-կամաց ամէն ինչ ողողում, տակովը տալիս, շէնք ու ծառի շուրջ լճեր գոյացնում, խեղտում-տապալում եւ գնում էր խաղաղութեամբ ջրելու հպատակների արտեր ու պարտէզ :

Եւ մինչ արքայի պալատ ու պարտէզ այդ ջրի տակ թաղւում փլում էին, դրսում հպատակների կեանքն այդ միեւնոյն ջրով աճում էր բարւոքութեամբ :

Իրքան սկսեց բարկանալ : Բայց քա՛նի բարկանում էր, առուակն աճում էր, խոշորանում եւ գետի փոխւում :

— Վնասել այդ անկոչ հիւրին, դուրս նետել նրան իմ հողից, իմ տէրութիւնից ! . . .

Բայց, հրաման տալը հեշտ էր 'ի հարկէ, միայն թէ ինչպէ՛ս կըտ-

րել մի գետի առաջ , որ հոսում էր արագալազ , մեծանում անընդհատ , իր համար հող պատրաստում-գրաւում եւ տիրապետութիւնը կորդուստարածում :

Ու արքան հրամայեց ամէն միջոց գործ դնել , միայն թէ գետ դարձած առուակին իր հողիցը վնասել , պալատն ու կայքը նրա ողորումից պաշտել :

Հաւաքեցան իշխան-պալատական , զօրք ու զօրավար , փորձեցին գետի հեղեղատը փոխել , հսկայ ամբարտակներ դէմ տալ նրա ընթացքին , վերերկց ցրեւել նրա ոյժը , գոնէ կտոր-կտոր անել : Բայց առուակը գալիս էր սահմանի աս'յն կողմին եւ երբ այս կողմը ամբարտակներ դրին , հոսող ջուրը ուռաւ , անցաւ ամէն բանի գլխով , փխցրեց նրանց ու աւելի կատապի , աւելի ոյժով հոսեց-ողողեց պալատ ու պարտէզ , չէնք ու ամբութիւն . . .

Այն ժամանակ արքան լուր ուղարկեց դրացի երկրին :

— Երկրիցդ , հրամայեց ասել նա այն երկրի արքային — մի անամօթ հիւր է եկել ինձ , որ նախ փոքր էր : յետոյ մեծացաւ եւ այժմ ողողել է ամէն ինչ , քանդել պալատներս : Կամ նրա դէմը փակիր եւ կամ ճանապարհը փոխիր՝ դէպի անապատը դարձուր :

Դրացի թագաւորը երբ լսեց այդ , ծիծաղեց , տարաւ եկողներին իր հողերը ցոյց աւաւ եւ ասաց .

— Ինքներդ տեսէք այժմ . իմ պալատներն էլ այդ միեւնոյն հիւրը ողողել է քանդել . փորձեցի եւ ես փոխել նրա հեղեղատը , ամբարտակ դնել , բայց նա ամէն արգելք սաղալեց եւ այժմ լիճ է շինել պալատներս , իր սեփականութիւնը դարձրել երկիրս : Նա չէ բղխում իմ հողերի միջից , որ աղբւրը փակեմ եւ կամ ետ—երկրիցս դուրս վաճառեմ : Գալիս է նա ուրիշ երկրից , իմ սահմանի աս'յն կողմի լեռներից :

Այն ժամանակ հզօր արքան մարդիկ ուղարկեց միւս տէրութեան մէջ , ապա աւելի հեռուն , եւ այսպէս , չը կարողացան հասնել առուակի ափունքին , որ բղխում էր շատ հեռու , անյայտ լեռներից , մեծանում էր իր անցած սեղերում . ողողում ամէն երկիր , պալատներ քանդում , դաշտեր ծաղկեցնում . . .

Ձրոյցը չէ պատում թէ վերջն ի՞նչ եղաւ : Միայն աւանդութիւնը ասում է որ հզօր թագաւորը շինեց մեծ մեծ ամբարտակներ , թուրքեր գետի դէմ , բայց բոլորին էլ առուակ-գետակը կտարեց ու անցաւ : Եւ , քա՛նի նրա դէմ թուում էին դնում , նա այնքա՛ն աւելի ոյժ էր կուտակում , յետոյ փխցնում , ջրի մէջ խեղաում ամէն արքայական պալատ ու սեփականութիւն . . .

Եւ այսօր , եթէ հզօր արքաների պալատ ու պարտէզի տեղ լճեր է կանգնած եւ կամ ճահիճներ , դրանց անողը աս'յն փոքրիկ առուակն է , որ անյայտ աշխարհներից գալով հող է միշտ դառնում իր ճանապարհի հա-

մար , մեծանում — դետի փոխում եւ ամբողջ երկրի մէջ կանգնում իր
թաղաւորութիւնը :

Թումբ կամ ամբարտակ փոխանակ կասեցնելու նրան , աւելի կա-
տաղեցնում է , աւելի ոյժ տալիս : Եւ նա քայլում է միշտ , ո՛չ միայն
պալատներէի գլխով , այլ եւ մանում-սպրդում է ամէն մի պարտէզ , ամէն
ծառաստան եւ իր ջրերի տակ թաղում ամէն՝ ի՛նչ որ արքայական է ,
կամ իշխանական . . .

Թիֆլիզ . 1903.

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ ՄԸ(1)

Սէպտեմբր թահրիի քիթապը մէր՛ի ու տըր քի .

Մէտինէի Լէֆոջա զազասը ճիւղարնտա , Կիրնէտէ վազի , Կէօք
մանասթըր տէմէքլէ մա՛րուֆ մէնպա՛ը չէյաթին օլան էրմէնիլէրին քի-
նիսէի նիքպէթէնիսէլէրի իշիւն Մէսրոֆ նամ էրմէնի իլէ Գասպար վէլէ-
տի Եա՛ռւպ , Տէֆան վէլէտի Մուրաս , վէ Աւետիք վէլէտի Պաշատուր վէ
սայիր էրմէնիլէր թայիֆէլէրի , տիվանը ալիշանը վաճիպ իւթթազիմէ
միւրաճաթ իառւպ՝ հազրէթի բէսուլի էքրէմ , սալլ Ալլահու ալէյհի
ուէսսէլէմ , վէ ճիհարհարը կիւզին , վէ ասհապը քիրամ , բըսուան Ալ-
լահու ալէյհիւմ էճմէ՛ին , զէմանը սասաթթլէրինաէ օլան ահանամէլէրին
իպրազ վէ երնէ թէճաթի իառւպ , վէ ճէզիրէի մէզպուրէտէ պիլ ֆիրի
վալիի վիլայէթ վէ համիի բի՛յէթ օլան իզզէթլի վէ սասաթթլի Ալի
փաշա , Կէսսէր Ալլահու լէհու թէյալա մին էլ խէյրաթլը մայէշա , հազ-
րէթլէրի թարաֆը փիւրչէրէֆլէրինաէ մուճիպլինճէ պույրուլտի շէրիֆ ,
վէ զըզլէի շէր՛աէն դատըի էսպագ զէմաննտա թէմէսիւ քէլլի օլմազա
ֆէթհ ու զըսաթթ օլունուպ , վէ պիլ ճիւմլէ մէֆուսուստա էրմէնի թա-
յիֆէսինին մահէլլի մէրսումէտէ մէնպա՛ը չէյաթին օլան մա՛պլտի նա-
միւպարէքլէրինաէ այինի պաթլլէ վէ էրքեանը աթլլի ի պրէ լճրա , վէ
թարիդի զէլալթէ քէնտիլէրին իլդա էթմէյէ մուզլիլ վէ միւֆտա վէ
մուպթիլլի մէրսուտ օլան փափասպար վէ բահիպլէր քինիսէի մէրդումէ
իշինաէ այինլէրին իճրա իտուպ , մատամա քի թաշրատա խիլաֆը ահա-
նամէ վէ իւսուլուպը սապըզը թէճալուզ էթմէյլէյէր՝ Լֆրատը աֆէրիտէ-
տէն պիր ֆէրա տախլ ու թէարրուզ էթմէյէ տէյու պույրուլմապլա՝
թէքրար միւճէտաէտէն զըզլէի շէր՛աէն տախլ Կէալէրինաէ օլան ահա-
նամէ վէ պույրուլտի շէրիֆ մուճիպլինճէ մատամ քի քինիսէի նիքպէթ-

(1) Այս չափ հետաքրքրական կալուածագիրք (նեօքըֆ) կը վերա-
բերի Կիպրոսի Ա. Մակարի վանքին , ոսկից օրինակելով զրկած է մեզ
Բակուրան , թարգմանու թեամբ հանդերձ :